ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

3 օգոստոսի 2017թվականի թիվ 37-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ԱՅՑԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՐՎԱԾ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԽՄԲԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Իրավական ակտերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի կողմից 2017թվականի հուլիսի 21-ին անցկացված խորհրդակցության ընթացքում տրված հանձնարարականների բովանդակությունը և դրանց հրատապ կատարման անհրաժեշտությունը

կարգադրում եմ

1. Հանձնարարականների իրականացումն ապահովելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ հետևյալ կազմով.

Ղալումյան Միքայել – խմբի ղեկավար, մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ

Մարդանյան Աշոտ - մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՀԳՄ ՏՍԳՀ բաժնի վարիչ

Բաբլումյան Ասքանազ - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալտնտեսական զարգացման վարչության ֆինասատնտեսագիտական բաժնի վարիչ

Ճաղարյան Արմեն - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության առաջատար մասնագետ

2. Հանձնարարել աշխատանքային խմբին.

1) 1 շաբաթյա ժամկետում համաձայն մարզում աղբահանության, սանիտարական մաքրման և կանաչապատման ուղղությամբ տարվող աշխատանքների ուսումնասիրության հարցաթերթիկի /կցվում է/ մարզի բոլոր համայնքներում իրականացնել իրավիճակի գնահատման ուսումնասիրություններ, կատարել վերլուծություններ և եզրակացությունները ներկայացնել Տավուշի մարզպետի քննարկմանը.

2) 3-օրյա պարբերականությամբ աշխատանքային խմբի կողմից կատարվող աշխատանքների ընթացքի վերաբերյալ մարզպետին ներկայացնել գրավոր տեղեկատվություն.

3) 10-օրյա պարբերականությամբ մարզի համայնքների համայնքային բյուջեներում աղբահանության իրականացման աշխատանքների գծով

ակնկալվող գումարների ծավալների աճի վերաբերյալ մարզպետին ներկայացնել տեղեկատվություն.

4) 1-ամսյա ժամկետում վերանայել մարզի համայնքներում աղբահանության պայմանագրերի կնքման մեխանիզմները և համայնքապետարանների հետ համատեղ տանել աշխատանքներ պայմանագրերի կնքման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ.

5) մարզի համայնքների ղեկավարների հետ քննարկել համայնքներում տնտեսական գործունեություն ծավալող սուբյեկտների հարակից տարածքներում նրանց կողմից աղբահանության, սանիտարական մաքրման և կանաչապատման պարտականությունների ստանձնման հնարավորությունները.

6) ուսումնասիրել և մարզպետին ներկայացնել առաջարկություն՝ մարզում աղբահանության սակագները միասնականացնելու և հավաքագրվող գումարների ծավալներն ավելացնելու վերաբերյալ:

3. Կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Տավուշի մարզպետի տեղակալ Լ. Սարգսյանին:

ԱԲՈՎՅԱՆ

ք. Իջևան
03 օգոստոսի 2017թ.